գիրս յաւարտ ածի». նա քննադատում է նախորդ գրչին. 108բ «Աւաղ եւ եղուկ է անգէտ գրագրին, ծ͞ծած հոգի, ի՞նչ կու առնես, գիտեմ, բանական ես, զգիրս տողել ես եւ մէկ մէկ յինչ ես կցել»: Ձեռագիրը նշանաւոր է յատկապէս Եզնիկ Կողբացու հաղուագիւտ եւ հին ընդօրինակութեամբ (Ցուցլ. Բ. 65)(*): Վիեննայի ձեռագիրն էլ այստեղից է առնուած:

Նոյն թուականին Ներսէս վարդապետի հրամանով գրուել է մի ուրիշ աւելի կարեւոր ձեռագիր, որ պատերազմի ընթացքում բերուել է Վարագից և այժմ կրում է 1298 համարը. տարաբաղդաբար ձեռագիրը թերի է սկզբից, հաւանօրէն չորս թերթ, որ Ոսկեբերանի Եզեկիէլի մեկնութեան յառաջաբանի մասն էր, բայց հնարաւոր է մեծ մասով վերականգնել Եսայի Նչեցու նոյն մարգարէի մեկնութիւնից, որի մասին խօսք կը լինի յետոյ: Այդ ձեռագիրը գրուած է 1280 թուին. 203ա. «Ցամի Չ. երորդի, Ի. երորդի, Թ. երորդի թուականիս Հայոց». ստացողն է Ներսէս վարդապետը: Ձեռագրի բովանդակութիւնն է Ոսկեբերանի, Եփրեմի, Կիւրեղ Աղեքսանդրացու և մեր Ստեփաննոս Սիւնեցու և Վարդանի Եզեկիէլի մեկնութիւնները, որոնցից ոչ մէկը դեռ եւս տպագրութեամբ ծանօթ չէ բանասիրութեան: Եփրեմի ասորերէն բնագիրը տպուած է Հռոմի հրատարակութեան մէջ պակասներով, իսկ Ոսկեբերանի և Կիւրեղ Աղեքսանդրացու մեկնութիւնների բնագիրներն իսկ անյայտ են մինչեւ այժմ, եւ ուրեմն այս Ձեռագիրը Գլաձորի փառքն ու պատիւը բարձրացնող մի unicum է համաշխարհային նշանակութեամբ(**):

Ներսէս վարդապետի գրել տուած և մեր ձեռքը հասած երրորդ ձեռագիրն է Դիոնեսիոս Արիսպագացուն վերագրուած «Յաղագս երկնային քահանայապետութեան» աշխատութիւնը. «ի թուիս ՉԼԱ. (= 1282) հայկազեան. տոմարիս» «հրամանաւ գիտնական և արգիւնական հռետորի Ներսէի.» Ստեփաննոս կրօնաւորի ձեռքով, որ խնդրում է յիշատակել «զառաջ ասացեալ երջանիկ վարդապետն Ներս. և զծնողսն իւր՝ ընդ նմին և զՄովսէս բեմբական, որ տ͞ր մարմնաւոր հանգստեամբ սպասաւորեաց մեզ». խնդրում է յիշել եւ իւր հանգուցեալ Պետրոս եղբօրը (Ցուցլ. Բ. 66, պատկ. 199): Մենք հնարաւորութիւն չէինք ունենալ որոշելու ոչ Ներսէս վարդապետի անձը և ոչ գրչութեան տեղը, եթէ 296ա. ներքևի լուսանցքում չլինէր հետեւեալ նկատողութիւնը. «Զամենամեղ ոգի Եսայի, որ յուղղելս աշխատեցայ, յիշեսջիք հանդերձ վարժողաւք յողորմութին. Ա͞ծյ»: Ձեռքից ծանօթ է մեզ, թէ նկատողութեանս գրող Եսային՝ Նչեցին է և ուրեմն, պատրաստուած է Գլաձորում իւր վարժապետի հրամանով: Ձեռագիրը գրուած էր, հաւանօրէն դպրոցական նպատակների համար. որովհետեւ Դիոնեսիոսի անուան հետ կապուած բոլոր աշխատութիւնները մեր միջնադարեան վարդապետարանների սիրելի դասագրքերից մէկն էր, արտագրուած և մեկնաբանուած մեր երկու վարդապետների ձեռքով: Փիրղալէմեանի հաւաքած անտիպ յիշատակարաններից մէկի ձեռագիրը արտագրուած է 1319 թուին այն օրինակից, որ գրուած էր «ձեռամբ Ներսէս բանի սպասաւորի, ի լաւ եւ ի հին օրինակաց, ի թարգմանչաց մեկնչացն, որ բնաբանն որիչ կայ գրած եւ մեկնիչն որիչ եղեալ հոռոմ գրով նշանակեալ». իսկ մեկնութեան համար ասուած է. «այն լուծմունքն, զոր մեծ



Պատկեր 198.

րաբունապետն Եսային է արարեալ իւր գիտնական իմաստութեամբն»: Ակնարկուած ձեռագրի բնագիրը Էջմիածնի № 60/167ը պիտի լինի, որի լուսանցքում Նչեցին իւր ձեռքով գրել է իւր լուծմունքը (պատկ. 200). իսկ բուն ձեռագիրը պատրաստուած է Յովհաննէս Հռոմայրեցու ձեռքով «ի ստոյգ և յընտիր աւրինակէ ի հռչակաւոր ուխտէն Հաղբատայ. հրամանաւ եւ արդեամբք եռամեծի եւ անյաղթ վարժապետի եւ ժրաջան հռետորի Եսաեայ» (պատկ. 201, Ցուցլ. 67, 68)(*):

Էջմիածնի ձեռագիրներից մէկը № 94 Գց./3276 ի միջի այլոց ունի և շատ մատենագրական յիշատակարաններ, որոնք արտագրուած են ուրիշ տեղերից, կարծում ենք դպրոցական նպատակի համար, որոնցից մէկն է 126բ. «Գրոցս յիշտկրան եւ տաղ չարեբական» (s!) վերնագրով. յիշատակարանի բնագիրը գրուած է եղել «յՉ մերոյս թվի, երեսներորդ և երրորդի» (= 1284), Ամատի բռնակալութեան (1282–

(*) Ձեռ. Էջմ. N° 1111/1907. նկարագրութիւնը և գիւտի հանգամանքները, նաև արժէքը տ. Հանդ. Ամս. 1904. Գալուստ Տէր Մկրտչեանի և Հ. Աճառեանի յօդուածների շարքը. արտատպուած նաև առանձին տետրակով. 1904. Վիեննա:

(**) Տես մեր նախնական հաղորդագրութիւնը այս գիւտի մասին. Արարատ. 1917. Փետր.-Մարտ: Ստեփաննոս Սիւնեցու մեկնաբանական մի ուրիշ գրուածք «Համառօտ տեսութի. աւետարանին Յովհաննու ի Ստեփաննոսէ եպէ. Սիւնեաց» գրուած է 1308 թուին Յովհան Երզնկացու ձեռքով (Ձեռ. Էջմ. N° 1311 (կար), իսկ նորա մեկնութիւնը «Չորից աւետարանչացն» շատ հազուագիւտ (Ձեռ. Էջմ. N° 862 նժ). պատրաստել ենք տպագրութեան համար:

(*) Տես մեր Բարտէզ հայ հնագրութեան. § 130, Տախտ. ՁԲ.: